ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ...

ԼՈՒԻԿԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ԲՈՒԼՂԱՐ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԸՆՏԻՐ ԳԱՀԱԿԱԼԻՆ

Մարտի 1-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Բուլղար Ուղղափառ Եկեղեցու նորընտիր Պատրիարք Նորին Սրբություն Նեոֆիտին:

«Տիրոջ օգնականությունն ու զորակացությունն ենք հայցում Ձերդ Սրբությանը՝ մաղթանքով, որ Բարձրյալն Աստված Ձեր հովվապետական ծառայությունն արդյունավորի նոր ձեռքերումներով՝ հանուն Բուլղար Եկեղեցու պայծառության եւ Ձեր հավատավոր ու բարեպաշտ հոտի հոգեւոր միսիթարության: Մեր աղոթքն է նաեւ, որ Տերն արգասավորի Ձեր եւ Ձեր Եկեղեցու ջանքերը՝ ի խնդիր խաղաղության եւ համերաշխության ամրապնդման, եկեղեցիների ու տարբեր կրոնների միջեւ երկխոսության եւ բարեկամության զորացման», - ասված է հայրապետական շնորհավորագրում:

Վեհափառ Հայրապետը նաեւ գոհունակությամբ անդրադարձել է Բուլղարիայի ծաղկուն հայ համայնքին՝ իբրեւ վկայություն երկու եկեղեցիների պատմական կապերի ու համագործակցության: Շնորհավորական ուղերձում Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահություն է հայտնել, որ Նեոֆիտ Պատրիարքի գահակալության շրջանում երկու Եկեղեցիների միջեւ առկա եղբայրական եւ բարեկամական հարաբերությունները եւս կշարունակեն ծաղկել եւ արդյունավորվել՝ ի փառս Աստծու եւ ի բարօրություն հավատավոր երկու ժողովուրդների:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ԵԹՈՎՊԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Մարտի 1-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Նորին Սրբություն Մատաթիա Ա.-ին Եթովպիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք ընտրվելու առիթով:

«Լիահույս ենք, որ Ձերդ Սրբության գահակալության շրջանում Եթովպիայի մեր քույր Եկեղեցին կշարունակի առաջընթաց արձանագրել իր Տիրավանդ առաքելության մեջ...:

Ուրախություն է մեզ համար հաստատել, որ պատմական են մեր երկու ժողովուրդների ու Եկեղեցիների կապերը, որոնք պսակվել են սիրո գործակցության բազում օրինակներով եւ ձեռքբերումներով, եւ որն այսօր էլ իր բարերար ազդեցությունն ունի մեր երկկողմ հարաբերություններում: Վստահ ենք, որ Ձերդ Սրբության գահակալության օրոք մեր Եկեղեցիների պատմական բարեկամությունը, որում նաեւ կարեւոր դերակատարություն ունի Եթովպիայի հյուրընկալ երկրում ապրող փոքրաթիվ, բայց պատմական հայ համայնքը, կշարունակի զորանալ եւ գործակցության նոր արդյունքներ արձանագրել՝ ի խնդիր միջեկեղեցական եւ միջկրոնական երկխոսության, աշխարհում խաղաղության եւ կայունության հաստատման», - ասված է շնորհավորական ուղերձում:

Ամենայն Հայոց Հայրապետն աղոթքով մաղթել է, որ Աստված պահի եւ պահպանի Եթովպիայի Թեւահեղոս Ուղղափառ Եկեղեցին եւ նորընտիր Պատրիարքին Իր Ամենազոր Աջի օրհնության ներքո՝ պարգեւելով նրան քաջառողջ կյանքի երկար օրեր եւ Հովվապետական ծաղկյալ գավազան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մարտի 6-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի նախագահ Նորբերթ Լամմերթի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Հերմինե Նաղդալյանի:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց երկու երկրների միջեւ հարաբերությունների շարունակական զարգացման առիթով՝ ընդգծելով, որ նման այցելությունները պիտի նպաստեն հայ-գերմանական համագործակցության առավել ընդլայնմանը՝ ի նպաստ երկու ժողովուրդների: Ամենայն Հայոց Կաթողիկոսը ի դեմս տիար Նորբերթ Լամմերթի իր գնահատանքը հայտնեց Գերմանիայի Բունդեսթագին Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձեւի ընդունման համար: Նորին Սրբությունը նաեւ գոհունակությամբ անդրադարձավ Գերմանիայի իշխանությունների կողմից հայ համայնքին ցուցաբերվող զորակցությանը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ երկրի սոցիալ-տնտեսական վիճակին ու կրոնական կյանքին, Հայ Եկեղեցու դերակատարությանն ու առաքելությանը հասարակության կյանքում եւ տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված հոգեւոր առաջնորդների հանդիպումներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(8 մարտի, 2013 թ.)

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Հայրապետական մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում մեծազնիվ տիկնանց եւ օրիորդներին՝ Մարտի 8-ի տոնական առիթով:

Ուրախություն է ամենքիս համար այսօր մեծարել մեր սիրելի մայրերին, քույրերին ու դուստրերին եւ գնահատել մեր հայրենական, ազգային ու հոգեւոր կյանքում նրանց նվիրյալ ջանքերը, որոնք արդյունավորված են բազում ձեռքբերումներով:

Տնտեսության, գիտության, կրթության, մշակույթի բոլոր ասպարեզներում իրենց ավանդով, նախանձախնդրությամբ, խնամքով ու հոգածությամբ կանայք շարունակ հաստատում են սուրբգրային խոսքը, թե բարի եւ իմաստուն կնոջ շնորհը առավել է, քան ոսկին:

Աղոթում ենք առ Բարձրյալն Աստված, որ Իր հանապազ օրհնության ներքո պահի ու պահպանի բոլոր կանանց եւ օրիորդաց՝ զորացնելով հավատքով, շնորհազարդելով հոգեւոր առաքինություններով եւ պարգեւելով ընտանեկան խաղաղ ու ապահով կյանք, անվնաս երջանկություն ու նորանոր հաջողություններ:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սերը եւ Սուրբ Հոգու հաղորդությունը ձեզ հետ լինեն այժմ եւ հավիտյան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ վարդապետական թեզերի բանավոր պաշտպանություն:

Մասնավոր վարդապետության ատիճանի համար թեզ էին ներկայացրել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ Տ. Գաբրիել աբեղա Սարգսյանը («Տերունական աղոթքի հայ միջնադարյան մեկնությունները»), Տ. Տարոն աբեղա Ղուլիկյանը («Ախթալայի եւ Քոբայրի վանքերը (Պատմաեկեղեցական եւ դավանական պատկանելության քննություն)»), Տ. Շահե աբեղա Անանյանը («Իմաստություն եւ Աստվածաշունչ. Իմաստության կերպարն ըստ Առակաց Ա.-Թ.-ի»), Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը («Քրիստոնեական կրթության եւ արժեքների դերը երրորդ Հանրապետության տարիներին») եւ Տ. Զաքարիա աբեղա Բաղումյանը («Անապակ բաժակի խնդիրը Հայոց Եկեղեցում»):

Հանձնաժողովը, որի կազմում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վանական խորհրդի նախագահ եւ Հրապարակչական բաժնի փնտրեն Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանն իբրեւ նախագահ, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը եւ Մայր Աթոռի Կրթական հաստատությունների վերատեսուչ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը, քննելով ներկայացված թեզերը, արտոնել էին բանավոր պաշտպանության:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՊԼՈՎԴԻՎԻ Ս. ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԸՆՏՐԵՑԻՆ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

(13 մարտի, 2013թ.)

ՊԼՈՎԴԻՎ, ԿԱՆԹԵՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ - Ս.թ. մարտի 10-ին, Պլովդիվի Սուրբ Գեւորգ եկեղեցում, Ս. Պատարագի ավարտից հետո տեղի ունեցավ նույն եկեղեցու Եկեղեցական վարչության հաշվետու-ընտրական ժողովը: Եկեղեցու բակում գտնվող Հայ մշակույթի տան դահլիճում հավաքվել էին համայնքի ավելի քան 200 անդամներ: Ժողովը ղեկավարում էին Բուլղարիայի Հայոց թեմի Առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Աբգար վարդապետ Հովակիմյանը, Թեմական խորհրդի ատենապետ պ-ն Ռուբեն Գրիգորյանը, Պլովդիվի հոգեւոր հովիվ Արժանապատիվ Տ. Գեւորգ ավագ քահանա Խաչերյանը եւ Եկեղեցական վարչության ատենապետ պ-ն Եղիազար Ուզունյանը:

Ժողովը Տերունական Աղոթքով բացեց Արժանապատիվ Տեր Հայրը:

Եկեղեցական վարչության ատենապետը ներկայացրեց վարչության 2010-2013 թթ. ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվությունը, ինչպես նաեւ Վերահսկիչ հանձնաժողովի կատարած ստուգումների արդյունքները: Ժողովը հաշվետվությունները լսելուց հետո քվեարկությամբ դրանք ընդունեց, որին հետեւեց վարչության հրաժարականի քվեարկությունը, որը նույնպես ընդունվեց:

Մինչեւ նոր վարչության թեկնածուների առաջադրումը, Առաջնորդական տեղապահը ներկաներին ծանոթացրեց եկեղեցական կառավարման Հայ եկեղեցում առկա փորձը եւ առաջարկեց, որ հոգեւոր հովիվը ի պաշտոնե լինի վարչության անդամ:

Լուսանկարներ վերջին պատգամավորական ժամանակից

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՎԱՌՆԱՅԻ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎՎԻՆ

(13 մարտի, 2013թ.)

ՎԱՌՆԱ, ԿԱՆԹԵՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն հայոց կաթողիկոսի Օրհնության Գրով լանջախաչ կրելու իրավունքի է արժանացել Վառնայի Ս. Սարգիս եկեղեցու հոգեւոր հովիվ Արժ. Տ. Բարդուղիմեոս քահանա Հակոբյանը:

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐ Է ՀՂԵԼ ՀՌՈՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ

Մարտի 14-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Ա. Պապին՝Հռոմի եպիսկոպոս եւ Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ ընտրվելու առիթով:

Հայրապետական շնորհավորագրում մասնավորաբար ասվում է.

«Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Սուրբ Պետրոսի Աթոռի գահակալ ընտրվելու բերկրալի առիթով Ձերդ Սրբությանն ենք հղում եղբայրական սիրո մեր ջերմ ողջույնները եւ շնորհավորանքները: Մեր աղոթքն է, որ Տերը արգասավորի Ձերդ Սրբության առաքելահաստատ պաշտոնը արդյունաշատ եւ երկարամյա գործունեությամբ՝ ի փառս Աստուծո եւ ի պայծառություն Քրիստոսի Սուրբ Եկեղեցու:

Քաղցրությամբ ենք հիշում մեր հանդիպումները Ձերդ Սրբության հետ Արգենտինայում, երբ առիթն ենք ունեցել ճանաչել Ձեզ որպես քաջ, իմաստուն եւ արդարամիտ հովվի: Մենք ուրախ ենք անդրադառնալ Ձեր անկեղծ սիրուն, որ ցուցաբերում եք հայ ժողովրդի հանդեպ:

Ուրախությամբ ենք հաստատում, որ մեր եկեղեցիների պատմական հարաբերությունները հատկանշված են եղբայրական ջերմությամբ: Մեծապես կարեւորում ենք այն առաջընթացը, որ արձանագրել են մեր Եկեղեցիները մեր եւ մեր նախորդների շրջանում՝ փոխադարձ այցերով, կրթական եւ բարեսիրական բազում ծրագրերով:

Աղոթում ենք, որ այս հարաբերություններն առավել հարստանան եւ զարդարվեն սիրո գործակցության նոր ձեռքբերումներով՝ ի խնդիր մարդկության առջեւ ծառացած արդի մարտահրավերների հաղթահարման, ժողովուրդների ու ազգերի միջեւ երկխոսության եւ բարեկամության...»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
(Հայտարարություն հեպրնպրական զարգացումների առնչությամբ)
(15 մարտի, 2013թ.)

Հետեւելով հեպրնպրական զարգացումներին եւ դրանց ընթացքում կատարված մեկնաբանություններին՝ հարկ ենք համարում նշել հետեւյալը:

Բարձր ենք գնահատում մեր ժողովրդի ողջամտությունը, որ դարձավ երաշխիքը ընտրությունների խաղաղ եւ քաղաքակիրթ կազմակերպման եւ իրականացման:

Նկատի առնելով ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, դիտորդական առաքելությունների զեկույցներն ու գնահատականները, ինչպես նաեւ այլ տեղեկատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հստակ արտահայտել է իր կեցվածքն ընտրության արդյունքների վերաբերյալ եւ անընդունելի է նկատում, երբ փորձ է արվում այսօր քաղաքական շահարկումների թիրախ դարձնել Ս. Եկեղեցին, Հայոց Հայրապետին եւ անգամ ՀՀ նախագահի երդման արարողությանը զորձածվող Վեհամոր Ավետարանը:

Մեծի պահոց այս շրջանում մեր ժողովրդի զավակներին հրավիրում ենք աղոթքի եւ կոչ ուղղում առաջնորդվել եղբայրսիրության ու համերաշխության ոգով՝ զերծ մնալով անհանդուրժողականության եւ ատելության դրսեւորումներից:

Հորդորում ենք նաեւ Տիար Ռաֆֆի Հովհաննիսյանին՝ դադարեցնել հացադուլը եւ ընտրել քաղաքական պայքարի առավել կառուցողական միջոցներ: Եկեղեցին չի արդարացնում հացադուլը, քանզի այն ասպվածատուր կյանքին սպառնացող գործողություն է:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 24-ին՝ Ծաղկազարդի տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Առավոտյան ժամերգությունից հետո, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Անդասպանի արարողություն եւ մանուկների օրհնության կարգ:

Մայր Տաճարում տոնի առիթով մատուցված Ս. Պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետն օրհնեց Մայր Աթոռի Էօնենկյան հանրակրթական դպրոցի սաներին եւ արարողությանը մասնակից մանուկներին:

Արարողությունից հետո Նորին Սրբությունն իր օրհնությունն ու մաղթանքները բերեց ներկա մանուկներին եւ ի հիշատակ մանուկների օրհնության օրվա նրանց բաշխեց փոքրիկ նվերներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Վեհափառ Հայրապետը մանուկների հետ

Գտնվեցք

ՈՏՆԼՎԱՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 28-ին՝ Ավագ հինգշաբթի օրը, Միածնաէջ Մայր Տաճարում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսապետեց Ոտնլվայի արարողությունը:

Արարողության ընթացքում ընթերցվեցին Ս. Գրքից հատվածներ, ապա Հովհաննես Պլուզ վարդապետի «Սիրո մասին» խրատը, որից հետո Նորին Սրբությունը խաչով ու Ավետարանով օրհնեց խորանի վրա դրված ջուրը եւ յուղը:

Ապա, մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրինակով, Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծունկի եկավ եւ շարականների երգեցողության ներքո լվաց ու յուղով օծեց տասներկու անձանց ոտքերը: Նրանց թվում էին եպիսկոպոսներ, վարդապետներ, աբեղաներ, սարկավագներ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաներ, Երեւանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի ուսանողներ, Մայր Աթոռի Էօռնեկյան հանրակրթական դպրոցի աշակերտներ, զինվորներ եւ Հայաստանում ապաստան գտած սիրիահայ մի մանուկ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 31-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեծ հանդիսավորությամբ տոնեց Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Սուրբ Հարության տոնը: Տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածում Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հայրապետական Պատարագին ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ինչպես նաեւ ՀՀ կառավարության անդամներ, Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ, կրթության եւ մշակույթի գործիչներ եւ բազում ուխտավոր հայորդիներ:

Հայրապետական թափորի ամպհովանին կրում էին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնի տնօրեն Կամո Հովհաննիսյանը, ՀՀ Արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը, «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի տնօրեն Հարություն Խաչատրյանը եւ «Իզմիրլյան» ԲԿ ՓԲԸ գործադիր տնօրեն Արմեն Մուրադյանը: Ս. Պատարագին Նորին Սրբությանը որպես առընթերականեր սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հովնան

եպիսկոպոս Հակոբյանը եւ Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը:

Պատարագի ընթացքում հրաշափառ Ս. Հարության տոնի առիթով Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր պատգամն ու օրհնությունը հղեց աշխարհասփյուռ հայ ժողովրդին՝ ավետելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

(Մարտի 22, 2013 թ.)

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Սիփան արեղա Գեւորգյանն ազատվել է Մայր Աթոռի Դիվանատան Եկեղեցական-ժողովական կառույցների գրասենյակի տնօրենի պարտականություններից եւ հոգեւոր ծառայության կոչվել Չիլիի հայոց համայնքում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ՋՈՒՐԱՊ ՔԱՀԱՆԱ ՄԱԶՄԱՆՅԱՆԸ

(Մարտի 22, 2013 թ.)

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Վիրահայոց թեմի հոգեւոր սպասավոր Տ. Զուրապ քահանա Մազմանյանը՝ հովվական իր ծառայության վայրը լքելու համար:

Այսուհետ կարգալույծ եկեղեցականը կդասվի աշխարհականների շարքը՝ Էդգար Մազմանյան ավազանի անունով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հայրապետական պատարագ ՝ Հաղարծնի Սուրբ Աստվածածին եկեղեցում

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Արման սրկ. Փիլիպոսյանը (Գերմանիայի թեմ)
Սոնա Սարգիսյան-Եազուպյանը (ԱՄՆ Արեւմտյան թեմ)
Վռամ սրկ. Սիմոնյանը (Ֆրանսիայի թեմ)
Սիմոն սրկ. Միքայելյանը (Ֆրանսիայի թեմ)
Երվանդ Քլոդ Հարությունյանը (Ֆրանսիայի թեմ)
Լաուրա Հարությունյանը (Արարատյան Հայրապետական թեմ)

ԼԱՆՋԱԽԱՉ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՆ ՍՏԱՑԵԼ

Բարդուղիմեոս քհն. Հակոբյանը (Բուլղարիայի թեմ)
Օշական քհն. Խաչատրյանը(Ռումինիայի թեմ)

ԾԱՂԿՅԱ ՓԻԼՈՆ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ Է ՍՏԱՑԵԼ

Եզրաս քհն. Բոզդանը (Ռումինիայի թեմ)

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Նոր Օր շաբաթաթերթը (ԱՄՆ Արեւմտյան թեմ)
Տաթեւ Եպս. Հակոբյանը (Ռումինիայի թեմ)
Պատրգամավորական ժողովը (Ռումինիայի թեմ)
Մադլեն Վանլյանը (Լիբանան)
«Հավատամք» ամսաթերթը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)